

## ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

14) Եկեղեցոյ հայրերը ինչպէ՞ս կը  
մեկնաբանեն Յիսուսի մկրտու-  
թեան դրուագը:

Աստուածաբական վերոգրեալ  
ըմբռնումներուն կը հանդիպինք 5-րդ  
դարու նշանաւոր հեղինակ Անտի-  
պատրոս Բոստրացիի յունարէն բնա-  
գիրով եւ հայերէն թարգմանութեամբ  
պահուած Տիրոջ Ս. մկրտութեան  
նուիրուած ճառին մէջ, ուր կը կար-  
դանք. «Յորդանանի խորքերն իջնե-  
լով, վիշապի գլուխը պիտի ջախջախեմ  
եւ անոր ժանիքներուն մէջէն դուրս  
պիտի հանեմ մարդկային ցեղը...: Կը  
մկրտուիմ, որպէսզի աշխարհը մեղքե-  
րէն մաքրեմ: Կը մկրտուիմ, որպէսզի  
վիշապը կարթով բռնեմ...: Կը  
մկրտուիմ, որպէսզի Աղամի մերկու-  
թիւնը զգեստաւորեմ»:

Հայոց եկեղեցւոյ նշանաւոր վար-  
դապետ եւ Վարդանանց ճակատա-  
մարտին մասնակից Ս. Եղիշէի Տիրոջ  
մկրտութեան նուիրուած ճառին մէջ  
յատկապէս կ'ըսուի. «Եւ որովհետեւ  
երեսուն տարեկանին է, որ մարդ  
կատարեալ կը գործէ, ասոր համա-  
պատասխան ալ ստեղծուեցաւ առա-  
ջին Աղամը, որ խարուելով օձէն  
փափկութեան դրախտէն դուրս ելաւ:  
Հստ նոյն կարելիութեան երկրորդ  
Աղամը Յորդանանի յորձանքներուն  
վիշապի գլուխը ջախջախեց:


## ԱՊԱՆԴԱՒՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

### ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԿԱՆԸ 8-ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՋԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Համբարձման լերան վրայ, մինչ  
աշակերտները իրենց սեւեռարիի  
հայեցքը ուղղեր էին երկինք՝ ուր  
պահ մը առաջ բարձրացեր էր իրենց  
Տէրը, ահա սպիտակ զգեստներով եր-  
կու հրեշտակներ իրենց մօտ կանգ-  
նեցան եւ ըսին. «Ով Գալիլեացի մար-  
դիկ, ինչո՞ւ կեցեր դէպի երկինք կը  
նայիք: Այս Յիսուսը որ ձեզմէ երկինք  
համբարձաւ, ԱՅՍՊԻՍ ՊԻՏԻ ԳԱՅ՝  
ԻՆՉՈՂԻՍ ՏԵՍԱՆՔ ԱՆՈՐ ԵՐԿԻՆՔ  
ԵՐԹԱԼԼ» (Գործք. 1.11): Պողոս  
առաքեալ կ'ըսէ, թէ մարդիկ «պիտի  
սպասեն» անոր գալուստը տեսնելու.  
«Դուք կուռքերէն Աստուծոյ դար-  
ձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստուծոյ  
ծառայելու համար եւ երկինքէն  
սպասելու անոր Որդին, որ ինք մե-  
ռելներէն յարուցանեց, այսինքն Յի-  
սուսը, որ մեզ կ'ազատէ զալիք բար-  
կութենէն» (Ա. Թես. 1.10): Իսկ քիչ մը  
անդին աւելի բացայայտելով կը գրէ.  
«Հետեւեալը կ'ըսենք ձեզի Տիրոջ խօս-  
քովը, թէ մենք որ մինչեւ Տիրոջ գա-  
լուստը ողջ կը մնանք, բնաւ ննջեցեալ-  
ներէն առաջ պիտի չանցնինք:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերքը ա-  
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-  
վուրդին, Եկեղեցիներու բանկալին  
մօտ: Նաև՝ Facebook-ի վրայ փետուել  
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա  
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-  
դամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.



ԲՈՒ ԽՈՍՔԻ Խ ՈՅԵՐՈՒԽ ՑՈՎ Է ՈՒ Խ ԾԱՌՈՒԵՐՈՒԽ ԼՈՅ  
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՅՈՒՆԻ 2018

ԹԻՒ 28

## ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՏԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 3.16-4.1: Ա. Կր. 1.25-30:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՍԸ ԸՆՏ ՄԱՏԹԵՈՍԻ 18.10-14

Զգո՞յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը: Գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք. Եթէ մարդ մը իր հարիւր ոչխարճներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը ոչխարճները լերան վրայ եւ չերքա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարճներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

## ԳԱԹՆՈՒԿԻ ԳԱՅԼԵՐՈՒՆ ՃԵԿՐԻՆ ՄԷՋ՝ ԻՆԾԻ ՀԱՄԱՐ

Ես խաչին վրայ ճեռքերդ տարածեցի կարծելով, որ քեզ սպասնեցի, իսկ դուս տարածուած ճեռքերովդ զիս ընդունեցիր գիրկիդ մէջ: Ես գաւազանով գլուխիդ զարկի, իսկ դուս՝ պահապանը գլուխիս, օրինութիւններ թափեցիր գլուխիս վրայ: Ինծի համար խաչին տակ կըեցար, որպէսզի մեղքի տակ կըածս՝ ոտքի կանգնիմ: Ինծի համար խաչին վրայ գլուխիդ խոնարհեցուցիր եւ ինծի նայեցար հաշտութիւն խնդրելով, իսկ ես երեսդ ի վեր պոռացի՝ խաչէն վար իշի՛ր եթէ երբեք Կստուծոյ Որդին ես: Ինծի համար Գառնուկի՝ գայլերուն ճեռքին մէջ ինկար, որպէսզի Չարին ճեռքին մէջ ինկածս՝ փոխադրես երկնաւոր Յօր ճեռքին մէջ: Ընորհակալ եմ, ՏԵՇ Յիսուս, այդ փոխադրութեան համար:

## ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՏՕՆ ԹԱՎԻՇՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՄԱՆԴՈՒԽԾ ԿՈՅՑԻ

ՍԱՆԴՈՒԽԾ ԿՈՅՑ

Դուստրը՝ Սանատրուկ թագաւորին, որ աշակերտելով Թաղէոս առաքեալին, իր հօրմէն գաղտնի ընդունած էր քրիստոնէութիւնը: Սանատրուկ, զայրանալով այս եղելութեան վրայ, հայրական ամէն ողոքիչ միջոցներ ի զուր գործադրելէ վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, երամայեց անոր մահը: Արքայազն օրիորդը, որ իր սեփին պատկանող շատերու ալ դարձին, այսինքն՝ հոգւոց փրկութեան պատճառ եղած էր արդէն Հայաստանի մէջ, իբրև առաջին առաքելուի Հայոց, եղաւ նաեւ առաջին վկայուիին, իր կուրծքէն ընդունելով նահատակող հարուածը: Ս. Թաղէոս թաղեց անոր մարմինը թափուն տեղ մը: Քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկի երամանով: Երեք դարեր անյայտ մնաց անոնց գերեզմանները, մինչեւ Լուսաւորչի եւ թերեւս նոյնիսկ Թարգմանչաց օրը: Թէեւ այս մասին յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, բայց աւելի ճոխ կերպով նկարագրուած է ան ժամանակակիցէ մը, եւ անկէ անցած Յայսմաւորէի մէջ: Կիրակոս անուն միայնակեաց մը, որ կը բնակէր Թաղէոսի եւ Սանդուխտի նահատակութեան վայրին մօս՝ Սանատրուկ կոչուած լեռ մը,

Արտազ գաւառի Շատարշան դաշտէն ոչ հեռու, տեսիլքի մը մէջ տեսաւ ոսկի լուսաշող արոռի վրայ բազմած մէկը, որ իր շուրջը ունէր հինգ մարդիկ, յետոյ բլուրին վրայ երեցաւ արեւու պէս պայծառ ոսկեհուռ զգեստներ հագած թագաւորացն աղջիկ մը, որ գլխուն վրայ հրաշագեղ պսակ մը՝ եկաւ արոռին առջեւ: Յետոյ սբանչելի կերպարանքով մարդ մը յայտնեց միայնակեացին, թէ լոյսը՝ Ս. Հոգույն շնորհին է, արոռին վրայինը՝ Թաղէոս առաքեալն է, աղջիկը՝ Սանդուխտ կոյսն է, իսկ արոռին շուրջինները՝ առաքեալին աշակերտներն են: Երկու օր վերջ, երկրորդ տեսիլքի մը մէջ առաքեալը, կոյսը եւ միւսները միայնակեացին կը մատնանշէին իրենց գերեզմանները: Այսպիսով գերեզմանները փորուելով բացուեցան եւ գտնըւեցան նշխարները, որոնց շուրջը խոնուեցաւ ժողովուրդին երկիւղածութիւնը:

**ԹԱՎԻՇՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՄԱՆԴՈՒԽԾ  
ԿՈՅՑԻ ՏՕՆԸ ԿՐ ԶՈՒԳՎԱԴՐԻՎԻ ԾԱԲԱՋ**

14 ՅՈՒՆԻՍ, 2018-ԻՆ

Հայոցում պատսախան բաժին

#### Ի՞նք ԶԵԽՈՎ ԿՐՆԱՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Նախ՝ ողորմած ու գթած պէտք է ըլլաս եւ երբ խեղճ աղքատները տեսնես, պիտի փորձես կարելիութեանդ սահմանին մէջ անոնց օգնել, որպէսզի արժանի ըլլաս Քրիստոսի երանութեան. «Երանի՝ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս 5.7): Երկրորդ՝ պահեցողութիւն պիտի ընես:

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏԱԿ

### ՄԻՏՔԻ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՈԹ

Շնորհակալութիւն ֆեզի, ո՞վ Աստւած՝ մեր տէրը, որ քու տեսանելի լոյսով ուրախացուցիր մեզ՝ քու բոլոր արարածներդ, իսկ քու պատուիրաններուդ հոգեւոր լոյսով լուսաւորեցիր ֆեզի հաւատացողները: Մե՛զ ալ զօրացուր, Տէ՛ր, որպէսզի կարենանք քու պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն ատեն, որպէսզի լուսաւորուած միտքով՝ միշտ քու կամքդ կատարենք եւ քու պատրաստած բարիքներուդ հասնինք բոլոր սուրբերուդ հետ միասին, մեր Տիրոց եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհնովն ու մարդասիրութեամբը: Անո՞ր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դո՞ւն ես մեր խաղաղութիւնն ու կեանքը, ո՞վ Միածին Որդի Աստուծոյ, մեր Տէրն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Տո՞ւր մեզի քու խաղաղութիւնդ, որ սուրբ առաքեաններուդ շնորհեցիր՝ անոնց վրայ փշելով կենդանանոյ եւ ամենագօր քու Սուրբ Հոգիդ: Որպէսզի մե՛նք ալ աշխարհէն եկող ամէն տեսակի փորձութիւններէն խաղաղած՝ տաճար եւ բնակարան դառնանք աստուծային շնորհներուդ, եւ շնորհակալութեամբ փառաւորենք ֆեզ՝ ո՞վ Քրիստոս, մեր Աստուծը, Հօրը եւ Սուրբ Հոգիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն

ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ Է ՄԻՇ

«Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հնա եմ՝ անոնց միջեւ» (Մտք. 18.20): Այս, Աստուած հետն է բոլոր անոնց, որոնք կը հաւաքուին իր անունով եւ իր անունին փառքին համար: Աստուած հետն է իր եկեղեցիին՝ Քրիստոսի մարմինին: Աստուած բոլոր անոնց հետ է՝ այն երեք երիտասարդներուն որոնք կրակի հնոցին մէջ նետուեցան եւ որոնց «վրայ կրակի հոտն անգամ չկար» (Դն. 3.24-27): Ան հետն էր Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներուն երբ անոնք բանտ նետուեցան եւ բանտին դոները բանալով զիրենք ազատեց (Գրծ. 5.18-19): Ան նաեւ մեզի հետ է (Մտք. 28.20), մեզ ալ ազատ արձակելու համար:

### ԱՂՈԹ

Ողորմէ՛, Տէ՛ր, մեր Եղբայրներուն, ծնողներուն ու իմ արիւնակից մերձաւորներուս, կրօնաւորներուն ու միանձն ճգնաւորներուն, անոնց, որոնք մեզի ողորմութիւն պարգեւեցին եւ անոնք, որ յանձնարարեցին զիրենք յիշել մեր աղօթքներուն մէջ: Ողորմէ՛, Բարերա՛ր, եւ տո՛ւր իւրաքանչիւրին կարիքին համաձայն: Առատապէս բաշխէ՛ Սուրբ Հոգիդ շնորհները բոլոր անոնց եւ զարդարէ՛ ու միացն'ր քու Աստուծածութեանդ սիրոյն մէջ: